# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 219- Ա

18 հուլիսի 2015 թ.

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով

***որոշում եմ՝***

1. Մարզի կենսագործունեությանն առնչվող հիմնախնդիրները լավագույնս լուսաբանելու համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից 360000 /երեք հարյուր վաթսուն հազար/ դրամ հատկացնել մարզի մամուլի և զանգվածային լրատվամիջոցների աշխատակիցներին՝ յուրաքանչյուրին 30000 /երեսուն հազար/ դրամի չափով պարգևատրելու նպատակով՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Համիկ Շահբազյանի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2015 թ. հուլիս -ի 18-ի
N 219-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՄԱՐԶԻ ՄԱՄՈՒԼԻ ԵՎ ԶԼՄ-ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ

1. Շահբազյան Հասմիկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ
2. Խլղաթյան Խոսրով - «Գեղամա աշխարհ» մարզային թերթի խմբագիր
3. Ղազարյան Ֆելիքս - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կրտսեր մասնագետ
4. Երանոսյան Դավիթ - «Զանգակ» հեռուստաընկերության խմբագիր
5. Գասպարյան Սեդա - «Դե ֆակտո» ամսագրի թղթակից
6. Հայրապետյան Պապ - «Սևան» թերթի խմբագիր
7. Մալխասյան Վրույր - «Զանգակ» հեռուստաընկերության լրագրող
8. Խաչատրյան Վարդգես - «Քյավառ» հեռուստաընկերության տեսագրող օպերատոր
9. Հովակիմյան Տիգրան - «Քյավառ» հեռուստաընկերության լրագրող
10. Պողոսյան Արգամ - «STV-1» հեռուստաընկերության տեսագրող օպերատոր
11. Կարապետյան Արտակ - «Զանգակ» հեռուստաընկերության տեսագրող օպերատոր
12. Բարսեղյան Սուրեն - «STV-1» հեռուստաընկերության լրագրող

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Կատարող՝ՖՍՏԶ Վարչություն
Ա.Բաղեյան